ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով կիրառված հայցի ապահովմանը, ցանկանում է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալի հիման վրա՝ նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, Դատարանը գտնում է, որ 22.11.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը ենթակա է վերացման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Դատարանի 22.11.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE1E-9676-4957-BD93 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am